Գնահատման զեկույց

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի գնահատումը IFC-ի աուդիտի համար

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակ

C-I-R7-Y08-F104
Նոյեմբեր 2008

Վրաստան
Բաքու – Թբիլիսի – Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղ

Նաողրեբի գյուղի բնակիչների հայցը

Ամփոփում

Այս գնահատման զեկույցը արտահայտում է IFC-ի ներդրումով իրականացվող Բաքու – Թբիլիսի – Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի (Ծրագիր) հետ կապված բողոքը: Բողոքը արձանագրվել է Վրաստանի Նաողրեբի գյուղի բնակիչների կողմից: Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը վճռեց, որ կողմերը չեն ցանկանում ներգրավվել խնդրի միասնական լուծման գործընթացում: Հայցը այդ պատճառով տեղափոխվել է Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակ գնահատում անցկացնելու համար, որպեսզի որոշվի, թե արդյոք բողոքը համապատասխանում է օմբուդսմենի գրասենյակի կողմից հետաքննության համար սահմանված չափանիշներին, որից հետո էլ անցկացվում է աուդիտ: Բողոքողները նշում են իրենց հողային իրավունքները և պնդում, որ ծրագրի կողմից իրենց հողերն օգտագործվել են և վերջինս ոչ մի կերպ փոխհատուցվել:

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակ
Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC)
Բազմակողմանի ներդրումների երախշավորման գործակալություն
Համաշխարհային Բանկի խմբի անդամներ

Բովանդակություն

1. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի գնահատման գործընթացի ամփոփ ներկայացում
2. Գնահատում անցկացնելու նախադրյալներն ու բողոքները
3. IFC-ի աուդիտի գնահատման շրջանակը
4. Նպատակահարմար համարված քայլերը
5. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի ձեռք բերած տվյալները
6. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի որոշումը

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի մասին

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի առաքելությունն է ծառայել որպես արդար, վստահելի և արդյունավետ անկախ այլընտրանքային տարբերակ և բարելավել IFC-ի և ՀԲ-ի խմբի անդամների բնապահպանական և սոցիալական հաշվետվողականությունը:

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը մի անկախ կառույց է, որը անմիջականորեն զեկուցում է ՀԲ-ի խմբի նախագահին: Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը դիտարկում է համայնքների բողոքները, որոնք ի հայտ են գալիս ՀԲ խմբի մասնավոր սեկտորի երկու առաջնային կառույցների զարգացման ծրագրերի նախաձեռնությամբ: Դրանք են Միջազգային Ֆինանսական կորպորացիան (IFC) և Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալությունը (MIGA):

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել visit www.cao-ombudsman.org կայքը:

1. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի գնահատման գործընթացի ամփոփ ներկայացում

Երբ Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի ստանում է IFC-ի կամ MIGA-ի ծրագրի հետ կապված բողոք, այն սկզբում վերանայվում է Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի կողմից, որն աշխատում է արագ և արդյունավետ կերպով արձագանքել միասնաբար անցկացվող լուծումներով, եթե վերջինս կիրառելի է: Եթե Օմբուդսմենը պարզում է, որ կողմերը չեն ցանկանում միասնաբար լուծել խնդիրները, գրասենյակի փոխնախագահը իրավունք ունի պահանջել Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի կողմից անցկացվող կատարողականության աուդիտ IFC-ի կամ MIGA-ի համար, որպեսզի գնահատի բողոքում վեր հանած խնդիրները: Աուդիտը կարող է նաև անցկացվել ՀԲ-ի խմբի նախագահի կամ IFC-ի կամ MIGA-ի ավագ ղեկավարության նախաձեռնությամբ:

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի գնահատումը նախնական հետաքննություն է՝ պարզելու, արդյոք օմբուդսմենի գրասենյակը պետք է անցկացնի IFC-ի կամ MIGA-ի կատարողականության աուդիտը: Այս գնահատումների միջոցով, օմբուդսմենի գրասենյակը ապահովում է, որ IFC-ի կամ MIGA-ի աուդիտ արվի միայն այն դեպքում, երբ դրանց սոցիալական կամ բնապահպանական քայլերը զգալիորեն անհանգստության առիթ ունեն:

Այս աուդիտը նպատակ ունի գնահատել համապատասխան քայլերի և դրան հարող ուղեցույցների և գործընթացների կիրառումը, որպեսզի որոշի, թե արդյոք IFC-ին և MIGA-ն համապատասխան են: Կատարողականության համապատասխանության աուդիտի հիմնական շեշտը դրվում է IFC-ի և MIGA-ի վրա, սակայն սպոնսորի դերը նույնպես կարող է վերանայվել:

Աուդիտի գնահատումը և ցանկացած այլ աուիդտ պետք է մնա նախնական բողոքի կամ պահանջի շրջանակներում: Այն չի կարող նաև ներառել այլ խնդիրներ: Նման պարագաներում բողոքողը կամ պահանջողը պետք է մեկ այլ բողոք ներկայացնի:

Կատարողկանության գնահատումը կհետևի, թե ինչպես են IFC-ը, MIGA-ն հետևել տեղական օրենսդրությանը, միջազգային իրավական պարտավորություններին և աուդիտի այլ չափանիշների: Օմբուդսմենի գրասենյակը դատական գործընթացների իրավասություն չունի: Գրասենյակը Բողոքարկման դատարան չէ կամ իրավական հարկադիր կառույց, ինչպես նաև այն չի կարող փոխարինել միջազգային դատարանների կամ դատական համակարգերի:

Գնահատման չափանիշները նշված են գրասենյակի գործառնությունների ուղեցույցում: Չափանիշները նշված են որպես հարցերի շարք՝ գնահատելու IFC-ի կամ MIGA-ի կատարողկանության աուդիտի արժևորումը: Չափանիշներն են՝

- Արդյո՞ք հիմք կա (կամ զգալի վտանգ) վտանգավոր սոցիալական և բնապահպանական արդյունքների, որից կարելի է ենթադրել, որ իրականացնողները չեն համապատասխան քայլեր չեն կիրառել:

- Արդյո՞ք զգալի սոցիալական և բնապահպանական արդյունքների վտանգի հիմք կա, որն ցույց է տալիս, որ իրականացնողները, ստանդարտները, ուղեցույցները թերի են եղել տրամադրելու պաշտպանության համապատասխան մակարդակ:
- Արդյո՞ք զգալի սոցիալական և բնապահպանական արդյունքների վտանգի հիմք կա, որն ցույց է տալիս, որ իրականացնողները, ստանդարտները, ուղեցույցները (կամ աուդիտի այլ չափանիշներ) չեն համարել կիրառելի, բայց պետք է կիրառվեին:
- Արդյո՞ք ապացույց կա, որ քայլերի, ստանդարտների, ուղեցույցների կամ գործընթացների կիրառումը նպաստում է սոցիալական և բնապահպանական վտանգավոր արդյունքի:
- Արդյո՞ք հնարավոր չէ սոցիալական և բնապահպանական վտանգավոր արդյունքները բացահայտել և ուղղել ծրագիր թիմի ներգրավվածությամբ առանց տվյալ պատճառների կամ իրադրություններ մանրամասն հետաքննության:
- Կարող է արդյո՞ք կատարողականության աուդիտը հիմք հանդիսանալ պարզելու իրականացման քայլերի նոր տեղեկատվության և ձեռք բերած բացահայտումների, որը հետագայում կօգնի կիրառել ապագա ծրագրերում:

Գնահատման ընթացքում, Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը քննարկումներ է անցկացնում IFC-ի և MIGA-ի թիմերի և այլ համապատասխան կողմերի հետ, որպեսզի հասկանա խնդիրների հիմնավորվածությունը և բացահայտի աուդիտի անհրաժեշտությունը:

Գնահատումը ավարտելուց հետո, Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը կարող է կիրառել երկու տարբերակներից մեկը. փակել հայցը, կամ անցկացնել IFC-ի կամ MIGA-ի. կատարողականության աուդիտ:

Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը կզեկուցի և կներկայացնի գնահատման ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը Գնահատման զեկույցում, որպեսզի գրավոր կերպով տեղեկացնի ՀԲ-ի խմբի նախագահին, վարչությանը IFCի-ի կամ MIGA-ի ավագ ղեկավարությանը և հանրությանը իր որոշման մասին:

Եթե Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը որոշում է իրականացնել կատարողական աուդիտ, այն աուդիտի համար կսահմանի պայմաններ համապատասխան գրասենյակի գործառնական ուղեցույցի:

2. Գնահատում անցկացնելու նախադրյալներն ու բողոքները

1. 1,760 կմ երկարությամբ Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նավթամուղը, որը IFC-ի ներդրում է, սկիզբ է առնում Ադրբեջանի Սանգաչալ տերմինալից, անցնում է Վրաստանով և ավարտվում է Թուրքիայում, Ջեհյանի նորակառույց միջերկրական ափի ջրային տերմինալում:

2. Վրաստանի Նաողրեբի գյուղի բնակիչները բողոքում են, որ ԲԹՋ նավթամուղի ծրագրի պատճառով առաջ եկած հետևությունները: Նրանք նշում են իրենց հողային իրավունքների խախտվել են, ծրագրի կողմից իրենց հողերը վերցվել է և ոչ մի կերպ չի փոխհատուցվել:

2008	
Փետրվար 28	Վրաստանի Նաողրեբի գյուղի բնակիչները բողոք են ներկայացնում օմբուդսմենի գրասենյակ:
Ապրիլ 29	Օմբուդսմենի գրասենյակը իր գնահատման շրջանակում արտահայտում է, որ կողմերը չեն ցանկանում ներգրավվել միասնական լուծման գործընթացում:
Հունիս 4	Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը ստանում է գնահատման հայցը:

3. IFC-ի աուդիտի գնահատման շրջանակը

3. Բողոքողները իրենք բողոքի մեջ վեր են հանում հատուկ կետեր: Բողոքողները պնդում են, որ.

- Նավթամուղի կառուցման գործընթացում ԲԹՋ-ի (կազմակերպության) կողմից արված քայլերը հողերի ձեռք բերման համար կոպտորեն խախտում են Վրաստանի սեփականության օրենսդրությունը:
- Կազմակերպությունը ծրագրի իրականացման ժամանակ անտեսել է իրենց հողի իրավունքի իրավական պահանջները և հեռացրել է իրենց հողատարածքից առանց որևէ կերպ փոխատուցելու: Բողոքողները նշում են, որ ռեգիոնալ և տեղական պետական իշխանությունները ընդունում են իրենց՝ հողերի պնդման իրավունքը:
- Կազմակերպությունը խանգարում է նրանց համապատասխանորեն ձեռք բերել իրենց կորուստին համարժեք:

4. Բողոքողները ցանկանում են բոլոր վերոնշյալի համար ստանալ փոխհատուցում:

4. Նպատակահարմար համարված քայլերը

5. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը հետևյալ իրականցման քայլերը համարում է բարձրացված հարցերի գնահատման հիմք.

> Համաշխարհային Բանկի գործառնությունների ուղեցույց 4.30 ոչ կամավոր տեղափոխություն: Այս գործառնական ուղեցույցը արտացոլված է ԲԹՋ տեղափոխության գործողությունների պլանում: Այն նաև ընդգծում է այլ կանոնակարգող դրույթներ, ինչպիսիք են Կառավարության համաձայնագիրը, տեղական օրենսդրությունը, հողի սեփականության իրավունքը, և ընդունված տարբերների իշխանությունը: Սոցիալական և տեղափոխության գործողությունների պլանի մոնիտորինգի իրականացման դրույթները, ինչպես նաև ընդգծում է, թե ինչպես է ԲԹՋ գործողությունների պլանի իրականացումն ու մոնիտորինգը անցկացվում:

6. ԲԹՋ-ի կողմից պատրաստված Հողի ձեռք բերման և փոխհատուցման ուղեցույցը տրամադրում է ԲԹՋ գործողությունների պլանի ամփոփ ներկայացում և այն միակ փաստաթուղթն է, որը տրամադրում է հողի և բերքի փոխհատուցում այն մարդկանց, ում վրա անդրադառնում է նավթամուղի անցկացումը:

5. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի ձեռք բերած տվյալները

7. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակի տեսանկյունից, հարցը նրանում է, թե ինչպես է IFC-ին դիտարկել ծրագրի կողմից ազդեցության տակ ընկած մարդկանց խնդիրները և նրանց փոխհատուցումը IFC-ի ընդհանուր քաղաքականության խնդիրների շրջանակներում: ԲԹՋ գործողությունների պլանում կան սահմանված դրույթներ, որպեսզի IFC-ին սրանով առաջնորդվի: ԲԹՋ գործողությունների պլանի դրութները գրվել են, որպեսզի պաշտպանեն հողերի սեփականատերերի իրավունքները, ովքեր ունենում են կորուստներ նավթամուղի կառուցման հետևանքով: ԲԹՋ գործողությունների պլանը համապատասխանում է Համաշխարհային բանկի գործառնությունների ուղեցույցի 4.30-ին:

8. IFC-ին քայլեր է ձեռնարկել, որ ԲԹՋ գործողությունների պլանի դրույթները հասանելի և հասկանալի լինեն մարդկանց և ապահովել է, որ Հողի ձեռք բերման և փոխհատուցման ուղեցույցը տպագրվի և բաժանվի նավթամուղի շրջակայքի տարածքներին: Տեղեկատվության հետագա տարածումն ամրապնդվեց Վրաստանի Հողի սեփականատերերի պաշտպանության ասոցիացիա հասարակական կազմակերպության ներգրավմամբ:

9. IFC-ն իրականցրեց դեպի նավթուղի մի շարք այցեր՝ հետևելու ԲԹՋ գործողությունների պլանի իրականացմանը, սակայն սա չէր ներառում հատուկ այցեր դեպի Նաողրեբի: IFC-ն նաև կիրառեց Սոցիալական և տեղախոխության գործողությունների պլանի տարվա մեջ երկու անգամ թողարկվող զեկույցը, ինչպես նաև ծրագրի համար նախատեսված բոլոր մնացած մոնիտորինգները:

10. IFC-ն ապահովեց, որ ծրագիրը ստեղծի բողոքարկման մեխանիզմ, որպեսզի բողոքողները ստանան փոխհատուցում: IFC-ն իրազեկված էր, որ 2004-ին այս բողոքարկման մեխանիզմի շրջանակներում կային կատարողության խնդիրներ, որը հողի ձեռք բերման գործընթացի ժամանակ էր: Այս բողոքարկման մեխանիզմի կատարողությունը հետագայում զգալի կերպով բարելավվել է:

11. IFC-ն նշում է, որ Սոցիալական և տեղախոխության գործողությունների պլանի մոնիտորինգի 2008թ զեկույցը նշում է, որ Վրաստանում հողերի գրանցման և անվանակոչման դեպքերում վիճաբանված տասնյոթ դեպքերից տասը լուծվել են: Այնուամենայնիվ, մնացած յոթ դեպքերի լուծումը կախված կլինի կամ պետական իշխանությունների որոշումից կամ դատական վճռից: Սա համապատասխանում է ԲԹՋ գործողությունների պլանին և Հողի ձեռք բերման և փոխհատուցման ուղեցույցին, որտեղ նշված է, որ հողի այն հարցերը, որոնք չեն կարող լուծվել բանակցությունների կամ բողոքարկման մեխանիզմով, պետք է լուծվեն Վրաստանի դատական համակարգի միջոցով:

12 Բողոքների խորհրդատվության օմբուդսմենը գտնում է, որ IFC-ն ապահովվել է, որ համապատասխան իրականացման քայլերը սահմանված են ծրագրում կիրառելի փաստաթղթերում, և, որ IFC-ն ապահովվել է, այդ քայլերի իրականացումը ծրագրի իրականացման ժամանակ: Բողոքների խորհրդատվության օմբուդսմենը գտնում է, որ IFC-ն կատարել է արդյունքների մոնիտորինգ և արձագանքել դրանց հետևություններին:

6. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի որոշումը

13. Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը որոշում է, որ այս հայցը չի բավարարում բոլոր չափանիշները, որպեսզի հետագա հետազոտություն իրականացվի աուդիտի տեսքով պարզելու, թե IFC-ին ինչպես է համապատասխանել սոցիալական և բնապահպանական քայլերին: Բողոքների խորհրդատվության օմբուդսմենի գրասենյակը փակում է հայցը: